

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՄ-ԶԻՆԱԿԱՆ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ» ՌԴ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

ՀՏԴ 327; 339.9

Վահե Դավթյան

Քաղաքական գիտությունների դոկտոր,
Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, Իրավունքի և քաղաքականության ինստիտուտ,
Հայ-ռուսական համալսարան,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հետազոտության նպատակն է վերլուծել ռուս-չինական միջպետական հարաբերությունների էներգետիկ բաղադրիչը: Միջգիտակարգային մոտեցման հիման վրա ներկայացվել են Ռուսաստանի և Չինաստանի էներգետիկ ռազմավարությունների ու երկկողմ էներգետիկ հարաբերությունների քաղաքական, աշխարհաքաղաքական ու տնտեսական խնդիրները: Ռուսաստանի ու Չինաստանի վառելիքաէներգետիկ համակարգերի վերլուծության միջոցով գնահատվել է այդ երկրների էներգետիկ զարգացման ներուժը: Առանձին ուշադրություն է դարձվել խոշոր ենթակառուցվածքային նախագծերի՝ «Սիբիրի ուժ»-ի և «Սիբիրի ուժ-2»-ի իրականացման հեռանկարներին ու խնդիրներին: Հատուկ ուշադրություն է դարձվել ՌԴ էներգետիկ անվտանգության ապահովման դոկտրինի որոշ հիմնադրույթներին՝ ասիակենտրոն էներգետիկ աշխարհակարգի ձևավորման և հեղուկացված գազի տեսակարար կշռի շարունակական աճի վերաբերյալ:

Հետազոտության նպատակներ են. 1. վերլուծել Ռուսաստանի և Չինաստանի վառելիքաէներգետիկ համակարգերի առանձնահատկությունները, 2. գնահատել ռուս-չինական էներգետիկ համագործակցության ներուժն արդի աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, 3. գնահատել ռուս-չինական էներգետիկ հարաբերությունների ենթակառուցվածքային բաղադրիչները:

Մեթոդաբանություն. կիրառվել են կառուցվածքային-ֆունկցիոնալ և համակարգային վերլուծության մեթոդները:

Եզրահանգումներ. Ռուսաստանն ու Չինաստանը շահագրգռված են զարգացնելու էներգետիկ ռազմավարական համագործակցությունը՝ ուղիներ փնտրելով նոր ենթակառուցվածքային ու լոգիստիկ լուծումներ ապահովելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով աշխարհաքաղաքական լարվածության աճը Եվրասիայում՝ Մոսկվան և Պեկինը պետք է խորապես դիվերսիֆիկացնեն էներգատրանսպորտային կապերը՝ էներգետիկ համագործակցության մեջ շեշտադրումը դնելով ոչ միայն կոնվենցիոնալ խողովակաշարային նախագծերի, այլ նաև հեղուկացված գազի շուկայի զարգացման վրա:

* Հոդվածը ներկայացվել է 02.04.2022:

Տպագրության է երաշխավորել ՀՌՀ Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքագիտության ամբիոնը: 11.04.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 11.04.2022:

Բանալի բառեր՝ Ռուսաստան, Չինաստան, էներգետիկա, անվտանգություն, աշխարհակարգ, բնական գազ, նավթ, «Սիբիրի ուժ», դոկտրին:

Ժամանակակից աշխարհակարգում էներգետիկ գործոնը շարունակում է առանցքայիններից մեկը մնալ՝ ձևավորելով ռիսկեր, ինչպես նաև՝ մարտահրավերներ միջազգային անվտանգության ապահովման ու զլորալ կայուն զարգացման համար: «Էներգետիկ աշխարհաքաղաքականություն» նոր միջգիտակարգային ենթագիտաճյուղի առաջացումը էներգետիկ գործոնի համալիր քաղաքական ընկալման ու գնահատման անհրաժեշտության գիտակցման ուղիղ արգասիքն է:

Ռուս-չինական էներգետիկ կապերը շարունակում են անկյունաքարային դեր խաղալ միջազգային էներգետիկ շուկաների կոնյունկտուրայի ձևավորման գործում՝ հաշվի առնելով կողմերի էներգետիկ համակարգերի երկարաժամկետ զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսի առկայությունը՝ արտահայտված ածխաջրածինների պաշարների, տնտեսական աճի ու լոգիստիկ հնարավորությունների տեսքով: Միաժամանակ, Մոսկվայի ու Պեկինի էներգետիկ օրակարգը խարսխված չէ բացառապես տնտեսական նպատակադրման վրա. այն առանձնանում է խորքային աշխարհաքաղաքական բովանդակությամբ և ուղղված է վերածնակոթելու համաշխարհային էներգետիկ շուկան՝ դարձնելով այն ավելի ասիակենտրոն ու դեդոլարիզացված: Սույն հոդվածով մենք փորձել ենք առանձնացնել ռուս-չինական էներգետիկ օրակարգի հիմնական ուղղություններն ու խնդիրները՝ գնահատելով էներգետիկ նոր ճարտարապետություն ձևավորելու կողմերի ռազմավարական հնարավորությունները:

ՌԴ վառելիքաէներգետիկ համակարգի ընդհանուր բնութագիրը

Ռուսաստանի վառելիքաէներգետիկ համալիրը (ՎԷՀ) խոշորագույններից մեկն է աշխարհում: Ռուսաստանը համաշխարհային շուկայում էներգառեսուրսների մատակարարման առաջատար երկրներից է. այն առաջին տեղն է զբաղեցնում վառելիքային հանքային ռեսուրսների արտադրողների շարքում:

Վառելիքաէներգետիկ համալիրը կարևոր տեղ է զբաղեցնում Ռուսաստանի տնտեսության մեջ՝ ՎԷՀ-ի ճյուղին բաժին է ընկնում ՌԴ-ի ՀՆԱ-ի մոտ 25%-ը, արդյունաբերական արտադրության ծավալի՝ 30%-ը, դաշնային բյուջեի եկամուտների՝ 50%-ը և արտահանումից ստացվող եկամուտների՝ 65%-ը: Ռուսաստանի էներգաբալանսը բնութագրվում է աշխարհում բնական գազի ամենաբարձր տեսակարար կշռով՝ էներգիայի առաջնային աղբյուրների սպառման ընդհանուր ծավալում՝ գրեթե 55% (նավթի և նավթամթերքի մասնաբաժինը 19% է, ածխինը՝ 15%, հիդրոէներգիայինը՝ 6%, ատոմային էներգիայինը՝ 5%): Էլեկտրաէներգետիկայում գազի մասնաբաժինն ավելի բարձր է՝ մոտ 70% (իսկ որոշ շրջաններում՝ գրեթե 90%)¹:

Նավթի պաշարներով Ռուսաստանն զբաղեցնում է 7-րդ տեղն աշխարհում՝ 10 մլրդ տ, կամ նավթի համաշխարհային ապացուցված պաշարների 6,2%-ը: Սակայն Ռուսաստանի նավթի երկրաբանական պաշարների պոտենցիալ գնահատումները 4-5 անգամ ավելի բարձր են: Բացի այդ, Ռուսաստանը համաշխարհային առաջատար է բոլոր հիմնական ցուցանիշներով՝ բնական գազի ապացուցված պաշարների ծավալը 47 տրիլիոն

¹ Олейнов А.Г. Топливо-энергетический комплекс мира. – М.: Навона, 2008. – С.429.

խորանարդ մետր է, կամ բնական գազի համաշխարհային պաշարների 25%-ը, արդյունահանումը՝ 607 մլրդ խորանարդ մետր, արտահանումը՝ ավելի քան 200 մլրդ խորանարդ մետր, մայրուղային խողովակաշարերի երկարությունը՝ 155 հազար կմ:

Ինչ վերաբերում է ածխային արդյունաբերությանը և էլեկտրաէներգետիկային, ապա այդ ոլորտներում Ռուսաստանը ևս առաջատար դիրքերում է: Այսպես, միջազգային փորձագետների գնահատումներով՝ ածխի ապացուցված պաշարներով Ռուսաստանը զբաղեցնում է աշխարհում երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո (այդ պաշարները կազմում են մոտ 160 մլրդ տ), իսկ ածխի ընդհանուր երկրաբանական պաշարների ծավալով զբաղեցնում է առաջին տեղը՝ 5,3 տրլն տ կամ համաշխարհային պաշարների 30%-ը: Նշենք նաև, որ Ռուսաստանի Դաշնությունն ունի աշխարհի խոշորագույն էլեկտրաէներգետիկ համակարգերից մեկը՝ 890 էլեկտրակայաններ, որոնց ընդհանուր հզորությունը գերազանցում է 215 ԳՎտ (դա 4-րդ տեղն է աշխարհում՝ ԱՄՆ-ից, Չինաստանից և Ճապոնիայից հետո)¹:

Չինաստանի էներգետիկ համակարգի ընդհանուր բնութագիրը

Չինաստանում առկա տնտեսական աճը պահանջում է էներգառեսուրսների ներկրման շարունակական ավելացում, ինչով և պայմանավորված է Պեկինի կողմից իրականացվող էներգետիկայի համակարգային դիվերսիֆիկացման քաղաքականությունը, որի արդյունքներն ակներև են թե արտաքին էներգետիկ կապերի հաստատման ու զարգացման, թե ներքին գեներացման տիրույթներում: Չնայած նրան, որ մինչև 1993 թ. Չինաստանը գտնվում էր էներգառեսուրս արտահանողի կարգավիճակում (մասնավորապես՝ նավթի արտահանումը հիմնականում իրականացվում էր Հարավային Կորեայի և Ճապոնիայի ուղղությամբ), այնուամենայնիվ, խորքային երկրաբանական հետազոտությունների, ինչպես նաև տեխնիկական արդիականացման ծրագրերի բացակայության պայմաններում արդեն 1994 թ. Չինաստանը սկսեց հանդես գալ որպես նավթի նետո-ներկրող, իսկ 2003 թ. նավթ ներկրող երկրների ցանկում զբաղեցրեց երկրորդ տեղը՝ զիջելով ԱՄՆ-ին (ներկրումն իրականացվում է հիմնականում Սերժավոր Արևելքից, Աֆրիկայից, Ռուսաստանից)²: Դա ամենևին էլ չի նշանակում, որ Չինաստանում լիովին դադարեցվել են նավթի արդյունահանման աշխատանքները. դրանք շարունակվում են, հատկապես՝ Սինցզյան-Ույգուրյան շրջանում, սակայն առայժմ արդյունահանվող նավթի ինքնարժեքը բավականին բարձր է, ինչի հետևանքով արտադրվող նավթամթերքի գինը մոտ 40-50%-ով բարձր է ներկրվող նավթամթերքի գնից [3]: Ներկայումս Չինաստանի ներկրման բաժինը նավթի համաշխարհային շուկայում մոտեցել է 20%-ի, ինչը նաև բավականին լուրջ աշխարհաքաղաքական ռեսուրս է ձևավորում Պեկինի համար՝ թույլ տալով էական ազդեցություն ունենալ համաշխարհային էներգետիկ կոնյունկտուրայի ձևավորման վրա:

Ներկայումս Չինաստանի էներգետիկ բալանսում առանցքային տեղ է զբաղեցնում ածուխը (մոտ 70%), որն օգտագործվում է առավելապես արդյունաբերական ոլորտում: Սակայն այստեղ ևս Չինաստանը 1990-ականների սկզբին որդեգրեց ներկր-

¹ Олейнов А.Г. Топливо-энергетический комплекс мира. – М.: Навона, 2008. – С.447.

² Energy and Environment-References for Energy Policy and Planning, Vol. 8, edited by Wang Qingyi, Ministry of Energy and Chinese Energy Research Society, February 1992.

ման քաղաքականություն, ինչն ածխի ներքին շուկայում իրականացված ազատակամացման հետևանք էր, որի արդյունքում չինական ածխի գինն առ այսօր մոտ 10 ԱՄՆ դոլարով բարձր է միջազգային շուկայում վաճառվող ածխի գնից: Այնուամենայնիվ, ածխի արդյունահանման տարեկան ցուցանիշներով վերջին տարիներին Չինաստանն առաջ է անցել ԱՄՆ-ից, ինչը, սակայն հնարավոր է եղել լրջագույն էկոլոգիական վնասների ու մարդկային կորուստների հաշվին: Բավական է նշել, որ տարեկան Չինաստանի ածխի հանքերում մահանում է մոտ 6000 մարդ: Սա կրկին բացատրվում է ոլորտի ազատականացմամբ, ինչը, իր հերթին, շուկայում կանաչ լույս է վառել մի շարք փոքր ու դեռ 19 դ.-ի տեխնիկա շահագործող ձեռնարկությունների համար: Ներկայումս ածխի ներկրման հիմնական ծավալներն ապահովվում են Ավստրալիայից ու Ինդոնեզիայից¹:

Անդրադառնանք Չինաստանի էներգետիկ հաշվեկշռի կառուցվածքին.

- Ածուխ՝ 67,5%
- Նավթ՝ 18%
- Հիդրոէներգիա՝ 7%
- Գազ՝ 5%
- Միջուկային էներգիա՝ 1%
- Վերականգնվող աղբյուրներ՝ 1,5%²:

Հաշվեկշռի տվյալ կառուցվածքն անհանգստացնում է Չինաստանի իշխանություններին, քանի որ այն զգալիորեն նպաստում է CO₂ արտանետումների շարունակական ավելացմանը՝ վտանգներ ստեղծելով երկրի էներգետիկ ու էկոլոգիական անվտանգության համար: Գիտակցելով այս ռիսկը՝ Պեկինը 2010 թ. որդեգրել է էներգետիկ բալանսում բնական գազի կշռի ավելացման քաղաքականությունը, ինչի իրականացումը խոշոր ենթակառուցվածքային, ինչպես նաև արտաքին քաղաքական լուծումներ է պահանջում: Կանխատեսվում է, որ առաջիկա տարիներին Չինաստանում բնական գազի սպառումը կազմելու է 200 մլրդ խմ, որից մոտ 120 մլրդ-ը պետք է ապահովվի ներքին արդյունահանման միջոցով: Ուստի, ներկրման ուղիների տարատեսակացման հետ մեկտեղ անրաժեշտ է զարգացնել նաև բնական գազի արդյունահանման համակարգը: Ակնհայտ է, որ վերոնշյալ 200 մլրդ խմ-ի կառուցվածքում հետզհետե ավելանալու է LNG՝ հեղուկացված գազի կշիռը, որի պահանջարկը Չինաստանում ու հատկապես արդյունաբերական առաջատար շրջաններում՝ Գուանդունում և Ֆուցզյանում, աճում է օրեցօր³: Նշենք, որ այսօր աշխարհում նշված վառելիքատեսակի աճը տարեկան կազմում է 3,5-4%:

«Սիբիրի ուժը» և ռուս-չինական էներգետիկ մերձեցումը

Հաշվի առնելով Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ու հատկապես Չինաստանում ածխաջրածնային էներգառեսուրսների սպառման դինամիկ աճը՝ Մոսկ-

¹ Coal Report 2020 / Asia Pacific Energy Research Centre (APERC) Institute of Energy Economics, Japan, 2020 / https://aperc.or.jp/file/2020/10/9/2020_Coal_Report.pdf

² China's Energy Conditions and Policies. Information Office of the State Council of the People's Republic of China December 2007 / <https://en.ndrc.gov.cn/policies-/202105/P020210527780237298276.pdf>

³ Кашин В.Б., Пятачкова А.С., Смирнова В.А., Потапшев Н.А. Развитие е энергетике КНР в период 14-ой пятилетки (аналитическая записка) // Высшая школа экономики, Москва, 2020. – С.6.

վան դեռ 2009-2010 թթ. սկսեց նոր լոգիստիկ երթուղիներ մշակել՝ վերոնշյալ շուկաներում իր դիրքերն ամրապնդելու նպատակով: 2009 թ. Մոսկվան և Պեկինը կնքեցին «վարկ նավթի դիմաց» սկզբունքի վրա հիմնված պայմանագիրը, որի համաձայն՝ Ռուսաստանին տրամադրվող վարկի ծավալը կազմում էր 25 մլրդ ԱՄՆ դոլլար, որից մոտ 15 մլրդ-ը պետք է ստանար «Ռոսնեֆտ» ընկերությունը, իսկ 10 մլրդ-ը՝ պետական նավթատրանսպորտային «Տրանսնեֆտը»: Սահմանված էր, որ Ռուսաստանը վարկը մարելու նպատակով 2011-2030 թթ. մոտ 300 մլն տոննա քանակությամբ կմատակարարի Չինաստան (այսպիսով՝ միջին տարեկան ծավալը կազմում է 15 մլն տոննա կամ մոտ 110 մլն բարել)¹: Որպես ռուս-չինական էներգետիկ համագործակցության մեկ այլ կարևոր դրվագ կարելի է դիտարկել չինական ընկերությանը Արևելյան Սիբիրում գտնվող երկու հանքավայրերում գազի արդյունահանման լիցենզիայի տրամադրումը կամ էլ Մոսկվայի հետ անցկացվող բանակցությունները՝ ռուսական ածխի երկարաժամկետ ներկրման վերաբերյալ:

Ներկայումս որպես ռուս-չինական էներգետիկ համագործակցության առանցքային դրսևորում հարկ է դիտարկել «Սիբիրի ուժը» գազամուղը (տե՛ս նկար 1), որով նախատեսվում է Յակուտիայում արդյունահանվող բնական գազի արտահանումն ապահովել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան: «Սիբիրի ուժը» ռուսական «Գազպրոմի» և չինական «CNPC» ընկերության համատեղ նախագիծ է, որի արժեքն ի սկզբանե գնահատվում էր մոտ 800 մլրդ ռուբլի, իսկ ավելի ուշ՝ 2018 թ.՝ 1,1 տրլն ռուբլի: Գազամուղի թողունակությունը կազմում է տարեկան 61 մլրդ խմ²:



Նկ. 1. «Սիբիրի ուժը» գազամուղը
(աղբյուրը՝ Petrodigst)

¹ Китай высоко оценил российскую нефть / <https://www.kommersant.ru/doc/1882127>

² Пляскина Н.И., Харитонов В.Н., Вижина И.А. «Сила Сибири» – драйвер или угроза газохимическим кластерам востока России? // Эко. – 2015. - №4. – С. 55.

Նախագծին նոր շունչ հաղորդեց 2014 թ. Ռուսաստանի և Չինաստանի միջև կնքված 30-ամյա պայմանագիրը¹, համաձայն որի Մոսկվան պարտավորվում էր տարեկան մոտ 40 մլրդ խմ գազ մատակարարել Չինաստան: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 400 մլրդ ԱՄՆ դոլլար²:

Այսպիսով, "Սիբիրի ուժը" ստացավ հստակ կոմերցիոն ուրվագիծ՝ Մոսկվայի համար ապահովելով բնական գազի արտահանման կայուն ու հեռանկարային ուղղություն, իսկ Պեկինի համար ստեղծելով էներգետիկ դիվերսիֆիկացման ու անվտանգության մակարդակի բարձրացման հուսալի մեխանիզմներ: Հարկ է ընդգծել, որ նշված ժամանակահատվածում Ռուսաստանում արդյունահանվող բնական գազն արդեն իսկ ապահովում էր աշխարհում գրեթե ամենացածր ինքնարժեքը (մոտ 20 ԱՄՆ դոլլար 1000 խմ դիմաց), ինչը ևս կարելի է դիտարկել որպես կարևոր մոտիվատոր Չինաստանի համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ներկրման նախատեսվող մեծ ծավալները՝ չինական կողմը որոշեց մանկրել՝ առաջարկելով Մոսկվային 25 մլրդ ԱՄՆ դոլլար վարկ՝ «Սիբիրի ուժը» նախագծի որոշ ենթակառուցվածքային խնդիրների լուծումն ապահովելու համար: Քաջ գիտակցելով, որ նման վարկային պայմանագիրը ապագայում կպարտավորեցներ Մոսկվային զեղչված գնով գազ արտահանել Չինաստան՝ «Գազպրոմ»-ը հրաժարվեց այդ առաջարկից: Մերժումը պայմանավորված էր նաև որոշ տնտեսական կանխատեսումներով, որոնց համաձայն, ելնելով համաշխարհային էներգետիկ շուկայում առկա վայրիվերումներից, դժվար կլինի ցածր գին ապահովել արտահանվող գազի համար: Նշենք, որ 2021 թ. չորրորդ եռամսյակում «Գազպրոմը» Չինաստան գազ էր արտահանում 196 դոլար 1000 խմ դիմաց գնով: 2021 թ. արդյունքների համաձայն՝ «Գազպրոմը» Չինաստան է արտահանել 10,4 մլրդ խմ բնական գազ՝ զիջելով դիրքերը Ավստրալիային ու Թուրքմենստանին:

Բացի երկկողմանի տնտեսական շահի, Չինաստանն ու Ռուսաստանը այս նախագծի շրջանակներում նաև ավելի լայն աշխարհատնտեսական շահեր են հետապնդում: Մասնավորապես՝ ենթադրվում է, որ «Սիբիրի ուժը» նաև գազ է մատակարարելու ռուսաստանյան գազավերամշակման կայաններ, որտեղ արտադրվող LNG-գազը կարտահանվի Ճապոնիա: Վերջինս, ինչպես հայտնի է, միջուկային հզորությունների կոնսերվացումից հետո էներգակիրների ներկրման նոր ուղիներ է փնտրում: Ստեղծված պայմաններում Մոսկվայի և Պեկինի համար նոր ու հեռանկարային շուկա կարող է բացվել³:

Նշենք նաև, որ «Սիբիրի ուժը» գազամուղի հետ մեկտեղ Մոսկվան կյանքի է կոչում «Սիբիրի ուժը-2» («Ալթայ») գազամուղի նախագիծը (տե՛ս՝ նկար 2), որով Արևմտյան Սիբիրից նախատեսվում է տարեկան մոտ 50 մլրդ խմ գազ արտահանել Չինաստանի արևմտյան հատվածում գտնվող Սինցզյան-Ույգուրյան ինքնավար շրջան: Ենթադրվում է, որ այստեղ ենթակառուցվածքը կմիանա չինական «Արևմուտք-Արևելք» գազամուղին ու կհասնի Շանհայ⁴:

¹ Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Китайской Народной Республики о сотрудничестве в сфере поставок природного газа из Российской Федерации в Китайскую Народную Республику по "восточному" маршруту // Ратифицировано Федеральным законом от 02.05.2015 N 106-ФЗ.

² Лабыкин А. Зачем нам нужна «Сила Сибири» // Эксперт. – 2014. – № 7. – С. 16.

³ Земченков А.С. Поставки СПГ в Японию: оценка потенциала российских энергетических компаний // Газовая промышленность. – 2019. - №9 (790). – С. 132.

⁴ Железняк М.Н., Сериков С.И., Шац М.М. Современный этап создания ГТС "Сила Сибири-2": проблемы и перспективы // Известия АО РГО. – 2021. - №2(61). – С. 28.



Նկ.2. «Սիբիրի ուժը-2» («Ալթայ») գազամուղը
(աղբյուրը՝ Gazprom)

Սակայն, չնայած 2014 թ. Մոսկվայի և Պեկինի միջև Ռուսաստանից բնական գազի ներկրումը «Ալթայ» գազամուղով կրկնապատկելու վերաբերյալ կնքված հուշագրի, այսօր նախագիծը կյանքի է կոչվում շատ դանդաղ տեմպերով։ Մինչդեռ ակնհայտ է, որ «Սիբիրի ուժը-2» նախագծի ռուսական էներգետիկ օրակարգում գտնվելը (ի հեճուկս մամուլում տեղ գտած այն հրապարակումների, որ մինչև 2030 թ. Ռուսաստանի գազային ոլորտի զարգացման ռազմավարության մեջ տվյալ նախագիծը բացակայում է) վկայում է այն մասին, որ մոտակա տասնամյակի ընթացքում Ռուսաստանի արտաքին էներգետիկ քաղաքականության վեկտորը կտեղափոխվի Եվրոպայից դեպի Ասիա։ Հենց այս մոտեցումն է ամրագրված 2019 թ. մայիսին հաստատված Ռուսաստանի էներգետիկ անվտանգության ապահովման դոկտրինում։

Ասիական տրոսն էներգետիկ աշխարհակարգի մարտահրավերները ՌԴ էներգետիկ անվտանգության դոկտրինում

2019 թ. մայիսի 13-ին հաստատված Ռուսաստանի Դաշնության էներգետիկ

անվտանգության նոր դրկտրինն¹ (թեև կրկնվում են նախկինում գործող փաստաթղթում ներառված մի շարք հիմնադրույթներ), աչքի է ընկնում մի քանի նոր դրույթներով, որոնք թույլ են տալիս պնդել, որ դա առավելապես քաղաքական փաստաթուղթ է՝ կոչված նախանշելու Ռուսաստանի արտաքին էներգետիկ ակտիվության հիմնական վեկտորները: Թերևս կարելի է առանձնացնել երկու այդպիսի դրույթ:

Առաջին՝ Ռուսաստանի էներգետիկ անվտանգության մարտահրավերների շարքում դիտարկվում է համաշխարհային շուկայում էներգառեսուրսների նոր արտահանողների հայտնվելը: Ակնհայտ է, որ խոսքն այստեղ ԱՄՆ-ի մասին է, որը 2017-ից սկսած համաշխարհային նավթագազային շուկայում իր տեսակարար կշիռն ավելացնելու ռազմավարություն է որդեգրել: Մրցակցությունը հիմնականում արտահայտվում է եվրոպական ուղղությամբ: Այստեղ վերջին տարիների ընթացքում Վաշինգտոնի կողմից ձևավորվել են քաղաքական և տնտեսական նախապայմաններ ամերիկյան հեղուկացված բնական գազի (LNG) ներկրման համար՝ ի հակակշիռ ռուսական խողովակաշարային, ապա նաև՝ հեղուկ գազի, ինչը հատուկ արդիականություն է ծեռք բերել ռուսական «Յամալ ՍՊԳ»-ի՝ Իսպանիա և Մեծ Բրիտանիա իրականացվող մատակարարումների կապակցությամբ: Հասկանալով եվրոպական շուկայում ռուսական գազին հակակշիռ ստեղծելու աշխարհաքաղաքական նշանակությունը՝ Վաշինգտոնը բազմիցս ցույց է տվել, որ պատրաստ է գործել հակառակ իր կարճաժամկետ տնտեսական շահերի, ինչի լավագույն օրինակ կարող է լինել Լեհաստանին LNG-ի դեմպինգային գներով մատակարարելու որոշումը (2018 թ. հոկտեմբեր²): Մոսկվան, որն ապահովում է գազի եվրոպական պահանջարկի մոտ 40%-ը, չի կարող Վաշինգտոնի ակտիվությունը չդիտարկել որպես մարտահրավեր սեփական արտաքին էներգետիկ ռազմավարությանը: Այսօր ևս, Ուկրաինայում տեղի ունեցող զարգացումների ներքո, ԵՄ-ն փորձում է նվազեցնել կախվածությունը Ռուսաստանից ներկրվող բնական գազից՝ որպես այլընտրանք դիտարկելով նաև ամերիկյան LNG-ն, որը, սակայն, հաշվի առնելով լոգիստիկ խնդիրները, չի կարող էական մրցակցություն ստեղծել ռուսական ընկերությանը:

Կարևոր է նշել նաև, որ բացի ԱՄՆ-ից, եվրոպական գազի շուկայում կայուն դիրքեր են ձգտում զբաղեցնել մի շարք այլ խաղացողներ: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է Իսրայելին, որը երկրաբանական-հետախուզական աշխատանքներ է իրականացնում «Լևիաթան» և «Թամար» հանքավայրերում, ինչպես նաև՝ OPEC-ից հեռացած Քաթարին, որը ձգտում է իր դիրքերն ամրապնդել եվրոպական շուկայում՝ սեփական տերմինալներ ձևավորելու միջոցով: Թեև, հաշվի առնելով իսրայելական հանքավայրերում երկրաբանական հետախուզությամբ զբաղվող ընկերության ծագումը, ինչպես նաև Քաթարի հետ «ՍՊԳ-կարտել» ձևավորելու Վաշինգտոնի փորձերը, այդ խաղացողները նույնպես փոխկապակցված են ԱՄՆ-ի հետ:

Երկրորդ՝ դրկտրինը կանխատեսում է համաշխարհային տնտեսական աճի կենտրոնի տեղափոխումն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան: Այս թրենդի ձևակեր-

¹ Доктрина энергетической безопасности Российской Федерации / Утверждена указом Президента РФ от 13 мая 2019 г. № 216.

² Сомнительная сделка: СПГ из США не заменит Польше российский газ // <https://iz.ru/801653/irina-tyruleva/somnitelnaya-sdelka-spg-iz-ssha-ne-zamenit-polshe-rossiiskii-gaz>

պումը՝ որպես Ռուսաստանի էներգետիկ անվտանգության մարտահրավեր, ըստ էության, բխում է նախորդ թեզից, քանի որ ռուսական արտաքին էներգաքաղաքականության ասիական-խաղաղօվկիանոսյան վեկտորի շրջանակներում հիմնական նշանակությունը հատկացվում է չինական շուկայում դիրքավորմանը: Չինաստանն աշխարհում LNG-ի գլխավոր սպառողն է, որն իրականացնում է իր էներգասպառման կառուցվածքում գազի մասնաբաժնի ավելացման հետևողական քաղաքականություն: Ընդ որում, Չինաստանում, ինչպես նաև ընդհանուր առմամբ ասիական-խաղաղօվկիանոսյան շուկայում նկատելի է խողովակաշարային գազի աստիճանական դուրս մղման միտումը, ինչը Մոսկվային թելադրում է արմատապես վերանայել իր էներգաքաղաքականությունն այդ տարածաշրջանում, որը կառուցված է առավելապես խոշոր խողովակաշարային նախագծերի իրականացման վրա («Սիբիրի ուժ» և «Սիբիրի ուժ-2»):

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսական ակտիվության կենտրոնի տեղափոխումն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան դիտարկվում է որպես մարտահրավեր Ռուսաստանի էներգետիկ անվտանգության համար: Միաժամանակ, այսօր մենք հետևում ենք, թե ինչպես է տվյալ շուկաներում ու հատկապես Չինաստանում դուրս մղվում կոնվենցիոնալ գազը, ինչը պետք է ստիպի Մոսկվային վերանայել իր՝ առավելապես խողովակաշարային նախագծերի վրա կառուցված էներգետիկ քաղաքականությունը վերոնշյալ ուղղություններով: Հաշվի առնելով Չինաստանի ու ԱՄՆ-ի միջև ընթացող առևտրային պատերազմը և ամերիկյան LNG-ընկերությունների համար Չինաստանում ստեղծվող դժվարությունները՝ Մոսկվան պետք է հետզհետե ավելացնի «Սախալին-2» և «Յամալ» համալիրներից LNG-գազի արտահանումը: Այսպիսով՝ մոտակա տարիներին LNG-ն լինելու է գլոբալ էներգետիկ շուկայի առանցքային բաղադրիչը, ուստի, արդեն այսօր շուկայի հիմնական դերակատարները, այդ թվում՝ Ռուսաստանը, պետք է վերաիմաստավորեն իրենց էներգետիկ ռազմավարությունը՝ ադապտացնելով այն նոր մարտահրավերներին:

Եզրակացություն

Ռուս-չինական համագործակցությունն էներգետիկ ու հատկապես նավթագազային ոլորտում իր մեջ հսկայական զարգացման ներուժ է պարունակում՝ պայմանավորված մի կողմից՝ Ռուսաստանի տարածքում գտնվող հարուստ ածխաջրածնային պաշարներով ու իրականացվող ենթակառուցվածքային-լոգիստիկ մեգանախագծերով, մյուս կողմից՝ Չինաստանում տարեցտարի աճող պահանջարկով: Միաժամանակ, Մոսկվայի ու Պեկինի կողմից կառուցվող ու կյանքի կոչվող էներգետիկ օրակարգն ունի բազմաթիվ խնդիրներ ու խոչընդոտներ, որոնցից, թերևս, արժե առանձնացնել համաշխարհային էներգետիկ շուկայում առկա բարդ զարգացումներն ու տուրբուլենտությունը, որն իր ուղիղ ազդեցությունն է ունենում թե՛ վերոնշյալ նախագծերի իրականացման, թե՛ պահանջարկի կանխատեսելիության վրա: Բազմաթիվ գլոբալ ռիսկեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ Covid-19 համավարակը, իսկ այժմ նաև՝ Ուկրաինայում տեղի ունեցող գործընթացներն էապես խոչընդոտում են նաև ռուս-չինական էներգետիկ համագործակցության զարգացմանը՝ հաշվի առնելով պատժամիջոցների կիրառման արդյունքում տեխնոլոգիաների փոխանցման սահմանափակումները, էներգակիրների գների կտրուկ աճը, լոգիստիկ ուղիների վերանայումը և այլն: Մյուս կողմից՝ ստեղծված իրավիճակը լուրջ հնարավորություններ է ստեղծում նոր լիցք հաղոր-

դելու ռուս-չինական էներգետիկ համագործակցությանը, հատկապես՝ գազային շուկայի ճարտարապետության արմատական վերանայման մասով, ինչի մասին առավել քան հստակ գրված է նաև ՌԴ էներգետիկ անվտանգության ապահովման դոկտրինում: Որպես ռուս-չինական էներգետիկ կապերի զարգացման ևս մեկ կարևոր մարտահրավեր անհրաժեշտ է դիտարկել հեղուկացված գազի՝ LNG-ի հանդեպ պահանջարկի շարունակական աճը, ինչը թելադրում է Մոսկվային նոր արտադրական հզորություններ ծնավորել՝ դիվերսիֆիկացնելով նաև այդ վառելիքի մատակարարման ուղիները դեպի Չինաստան:

Գրականության ցանկ

1. China's Energy Conditions and Policies. Information Office of the State Council of the People's Republic of China December 2007 / <https://en.ndrc.gov.cn/policies-/202105/P020210527780237298276.pdf>
2. Coal Report 2020 / Asia Pacific Energy Research Centre (APERC) Institute of Energy Economics, Japan, 2020 / https://aperc.or.jp/file/2020/10/9/2020_Coal_Report.pdf
3. Energy and Environment-References for Energy Policy and Planning, Vol. 8, edited by Wang Qingyi, Ministry of Energy and Chinese Energy Research Society, February 1992.
4. Доктрина энергетической безопасности Российской Федерации / Утверждена указом Президента РФ от 13 мая 2019 г. № 216.
5. Железняк М.Н., Сериков С.И., Шац М.М. Современный этап создания ГТС "Сила Сибири-2": проблемы и перспективы // Известия АО РГО. – 2021. - №2(61). – С. 27-39.
6. Земченков А.С. Поставки СПГ в Японию: оценка потенциала российских энергетических компаний // Газовая промышленность. – 2019. - №9 (790). – С. 130-133.
7. Кашин В.Б., Пятачкова А.С., Смирнова В.А., Поташев Н.А. Развитие е энергетики КНР в период 14-ой пятилетки (аналитическая записка) // Высшая школа экономики, Москва, 2020. – 24 с.
8. Китай высоко уценил российскую нефть / <https://www.kommersant.ru/doc/1882127>
9. Лабыкин А. Зачем нам нужна «Сила Сибири» // Эксперт. – 2014. – № 7. – С. 15–19.
10. Олейнов А.Г. Топливо-энергетический комплекс мира. – М.: Навона, 2008. – 472 с.
11. Пляскина Н.И., Харитонов В.Н., Вижина И.А. «Сила Сибири» – драйвер или угроза газохимическим кластерам востока России? // Эко. – 2015. - №4. – С. 54-71.
12. Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Китайской Народной Республики о сотрудничестве в сфере поставок природного газа из Российской Федерации в Китайскую Народную Республику по "восточному" маршруту // Ратифицировано Федеральным законом от 02.05.2015 N 106-ФЗ.
13. Сомнительная сделка: СПГ из США не заменит Польше российский газ // <https://iz.ru/801653/irina-tyruleva/somnitelnaia-sdelka-spg-iz-ssha-ne-zamenit-polshe-rossiiskii-gaz>

REFERENCES

1. China's Energy Conditions and Policies. Information Office of the State Council of the People's Republic of China December 2007 / <https://en.ndrc.gov.cn/policies-/202105/P020210527780237298276.pdf> (Eng.)
2. Coal Report 2020 / Asia Pacific Energy Research Centre (APERC) Institute of Energy Economics, Japan, 2020 / https://aperc.or.jp/file/2020/10/9/2020_Coal_Report.pdf (Eng.)
3. Doktrina jenergeticheskoy bezopasnosti Rossijskoj Federacii / Utverzhdena ukazom Prezidenta RF ot 13 maja 2019 g. № 216. (Rus.)
4. Energy and Environment-References for Energy Policy and Planning, Vol. 8, edited by Wang Qingyi, Ministry of Energy and Chinese Energy Research Society, February 1992. (Eng.)
5. Kashin V.B., Pjatachkova A.S., Smirnova V.A., Potashev N.A. Razvitie jenergetiki KNR v period 14-oy pjatiletki (analiticheskaja zapiska) // Vysshaja shkola jekonomiki, Moskva, 2020. – 24 s. (Rus.)
6. Kitaj vysoko uchenil rossijskuju neft' / <https://www.kommersant.ru/doc/1882127> (Rus.)
7. Labykin A. Zachem nam nuzhna «Sila Sibiri» // Jekspert. – 2014. – № 7. – S. 15–19. (Rus.)
8. Olejnov A.G. Toplivno-jenergeticheskij kompleks mira. – M.: Navona, 2008. – 472 s. (Rus.)
9. Pljaskina N.I., Haritonova V.N., Vizhina I.A. «Sila Sibiri» – drajver ili ugroza gazohimicheskim klasteram vostoka Rossii? // Jeko. – 2015. - №4. – S. 54-71. (Rus.)
10. Soglasenie mezhdru Pravitel'stvom Rossijskoj Federacii i Pravitel'stvom Kitajskoj Narodnoj Respubliki o sotrudnichestve v sfere postavok prirodnogo gaza iz Rossijskoj Federacii v Kitajskuju Narodnuju Respubliku po "vostochnomu" marshrutu // Ratificirovano Federal'nym zakonom ot 02.05.2015 N 106-FZ. (Rus.)
11. Somnitel'naja sdelka: SPG iz SShA ne zamenit Pol'she rossijskij gaz // <https://iz.ru/801653/irina-tcyruleva/somnitelnaia-sdelka-spg-iz-ssh-a-ne-zamenit-polshe-rossiiskii-gaz> (Rus.)
12. Zemchenkov A.S. Postavki SPG v Japoniju: ocenka potenciala rossijskih jenergeticheskikh kompanij // Gazovaja promyshlennost'. – 2019. - №9 (790). – S. 130-133. (Rus.)
13. Zheleznjak M.N., Serikov S.I., Shac M.M. Sovremennyy jetap sozdanija GTS "Sila Sibiri-2": problemy i perspektivy // Izvestija AO RGO. – 2021. - №2(61). – S. 27-39. (Rus.)

РЕЗЮМЕ

Российско-китайский "энергетический диалог" в контексте реализации доктрины энергетической безопасности РФ

Ваге Давтян

*Доктор политических наук,
профессор кафедры политологии, институт права и политики, Армяно-российского университета,
Ереван, Республика Армения*

Ключевые слова: Россия, Китай, энергетика, безопасность, миропорядок, природный газ, нефть, "Сила Сибири", доктрина.

Проанализирована энергетическая составляющая российско-китайских межгосударственных отношений. На основе междисциплинарного подхода представлены политические, геополитические и экономические вопросы российско-китайских энергетических стратегий и двусторонних энергетических отношений. Потенциал развития энергетики этих стран оценен на основе анализа их топливно-энергетических систем. Особое внимание уделено перспективам и проблемам реализации крупных инфраструктурных проектов – "Сила Сибири" и «Сила Сибири-2». Рассмотрены некоторые принципы Доктрины энергетической безопасности России по развитию "азицентричной" энергосистемы и постоянному увеличению доли сжиженного природного газа.

Цели исследования: 1. проанализировать особенности российско-китайской топливно-энергетической системы, 2. оценить потенциал российско-китайского энергетического сотрудничества в контексте современных геополитических процессов, 3. оценить инфраструктурную составляющую российско-китайского энергетического сотрудничества.

Методология. Используются методы структурно-функционального и системного анализа.

Выводы. Россия и Китай заинтересованы в развитии стратегического энергетического сотрудничества и ищут пути обеспечения новых инфраструктурных и логистических решений. Одновременно, учитывая растущую геополитическую напряженность в Евразии, Москве и Пекину необходимо глубоко диверсифицировать свои энерготранспортные связи, сосредоточив внимание не только на традиционных трубопроводных проектах, но также на развитии рынка сжиженного природного газа.

SUMMARY

Russian-Chinese "Energy Dialogue" in the Context of the Implementation of the Energy Security Doctrine of the Russian Federation

Vahe Davtyan

Doctor of Political Sciences,

Professor of the Department of Political Science, Institute of Law and Politics, Armenian-Russian University, Yerevan, Republic of Armenia

Key words: Russia, China, energy, security, world order, natural gas, oil, "Power of Siberia", doctrine.

The aim of the study is to analyze the energy component of Russian-Chinese interstate relations. Based on the interdisciplinary approach, the political, geopolitical and economic issues of Russia-China energy strategies and bilateral energy relations are presented. The energy development potential of these countries is assessed through the analysis of the fuel and energy systems of Russia and China. Particular attention is paid to the prospects and problems of the implementation of large infrastructure projects - "Siberian Force" and "Siberian Force-2". Special attention is paid to some principles of the Russian Energy Security Doctrine on the development of the Asian-centric energy system and the continuous increase in the share of liquefied natural gas.

The goals of the research are: 1. to analyze the peculiarities of the Russian-Chinese fuel and energy systems, 2. to assess the potential of Russian-Chinese energy cooperation in the context of current geopolitical developments, 3. to assess the infrastructural components of Russian-Chinese energy relations.

Methodology. The methods of structural-functional and system analysis are used.

Conclusions. Russia and China are interested in developing strategic energy cooperation, looking for ways to provide new infrastructure and logistics solutions. At the same time, taking into account the growing geopolitical tensions in Eurasia, Moscow and Beijing must deeply diversify energy transport links, focusing not only on conventional pipeline projects but also on the development of the liquefied natural gas market.